ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- ---------- 2021 թվականի №---Ա
քաղ. Երևան

«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ», «ՅՈՒՔՈՄ» ԵՎ «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱԿԱՆ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ՑԱՆՑԵՐՈՒՄ ՓՈԽԿԱՊԱԿՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՎՃԱՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի №250Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի ապրիլի 23-ի №112Ա, №113Ա և №114Ա որոշումներով «ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ», «ՅՈՒՔՈՄ» և «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերությունները (այսուհետ՝ Ընկերություններ) ճանաչվել են իրենց հանրային շարժական կապի հեռախոսացանցերում զանգերի վերջնավորման մեծածախ շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորներ,

բ) Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի №473Ն որոշմամբ հաստատված՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների հաշվարկման և կիրառման մեթոդիկան սահմանում է Հանձնաժողովի կողմից անհատական հանրային ամրակցված կամ շարժական կապի հեռախոսացանցերում զանգերի վերջնավորման մեծածախ շուկաներում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների հաշվարկման և կիրառման կարգը (այդ թվում՝ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերում փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների սահմանման բանաձևը), որի համաձայն՝ նշված վճարների հաշվարկման համար անհրաժեշտ միջազգային համեմատելի ցուցանիշների տվյալների հավաքագրման

համար հիմք է ընդունվում տվյալ տարվան նախորդող տարվա երկրորդ կիսամյակում էլեկտրոնային հաղորդակցության եվրոպական կարգավորողների մարմնի (BEREC) կողմից հրապարակվող՝ հրապարակման տարվա հունվարի 1-ի դրությամբ եվրոպական երկրներում փոխկապակցման վերջնավորման վճարների վերաբերյալ պաշտոնական զեկույցը,

գ) էլեկտրոնային հաղորդակցության եվրոպական կարգավորողների մարմնի (BEREC) կողմից հրապարակված՝ 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ եվրոպական երկրներում փոխկապակցման վերջնավորման վճարների վերաբերյալ պաշտոնական զեկույցի համաձայն՝ «զուտ ներքևից դեպի վեր երկարաժամկետ հավելյալ ծախսերի հաշվարկման» (Pure BU-LRIC) մեթոդով փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարներ կիրառող եվրոպական երկրների (Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Կիպրոս, Չեխիա, Գերմանիա, Դանիա, Հունաստան, Իսպանիա, Ֆրանսիա, Խորվաթիա, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Լատվիա, Հյուսիսային Մակեդոնիա, Մալթա, Նիդերլանդներ, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Շվեդիա, Սլովենիա, Սլովակիա) շարժական կապի ցանցերում փոխկապակցման ծառայությունների վերջնավորման վճարների պարզ միջին մեծությունը կազմում է 0,66 եվրոցենտ/րոպե,

դ) 2021 թվականի հուլիսի 7-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված 1 եվրոյի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքի մեծությունը կազմում է 585,73 դրամ՝ և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» և 2-րդ կետի «է» ենթակետերը, 37-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ, 7-րդ կետերը և 7-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությունների հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական հեռախոսակապի ցանցերում փոխկապակցման ծառայությունների վերջնավորման առավելագույն վճարը սահմանել 3,87 դրամ/րոպե (առանց ավելացված արժեքի հարկի):
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով սահմանված առավելագույն վճարից ցածր վճար կիրառելու դեպքում Ընկերությունները ապահովում են դրանց համաչափ (միևնույն վճար) և ոչ խտրական կիրառումը իրենց հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի ցանցերի հետ փոխկապակցված հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի նկատմամբ:

3. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 22-ի «ՎԵՈՆ Արմենիա», «ՄՏՍ Հայաստան» և «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերությունների հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական հեռախոսակապի ցանցերում փոխկապակցման ծառայությունների վերջնավորման առավելագույն վճարը սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի №530Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №250Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2021թ.